ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2024 թվականի N 12-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 14^3 հոդվածի 5-րդ կետի , Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 29 կետի , ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1/փ-479 եզրակացությունը և համաձայն սեփականատիրոջ դիմումի .Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացիներ Համլետ Անտոնի Շաղոյանի, Սոնյա Եզնիկի Մարգարյանի և Գագիկ Ռուբիկի Գրիգորյանի դիմումը և Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի գլխավոր հատակագծին համապատասխան Համլետ Անտոնի Շաղոյանի, Սոնյա Եզնիկի Մարգարյանի և Գագիկ Ռուբիկի Գրիգորյանի համատեղ սեփականություն հանդիսացող 07-064-0248-0014 կադաստրային ծածկագրի 0,17207 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության խաղող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ:

2. Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը վճարելուց հետո:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ԽԱՌԱՏՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՊԱՊՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՕԶՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**